



ԷԿՈՆՄԵՆԻԿ ԿՅԱՆԻ

ԵՐԿՈՒ ԽՈՍԺ

Ուրախությամբ պետք է հաստատել, որ վերջին երկու տասնամյակներում հայոց եկեղեցու նկատմամբ ստեղծված մասնավոր հետաքրքրությունը այլ քրիստոնյա եկեղեցիների կողմից առանձին ուշադրություն է գրավում և նոր խնդիրներ առաջադրում հայոց եկեղեցու գերագույն կենտրոնին:

S. S. Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոսը իր գահակալության առաջին իսկ օրերից մեծապես նպաստեց միջեկեղեցական կապերի և էկումենիկ հարաբերությունների զարգացման գործին՝ իր իմաստուն և հայ եկեղեցու լուսամիտ հայրապետներին հատուկ լայնախոսությամբ:

1962 թվականից պաշտոնապես մեր եկեղեցու անդամակցությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդին մի նոր խթան հանդիսացավ, որով հայոց եկեղեցին դուրս եկավ միջեկեղեցական արտաքին աշխարհ:

Արդարև, այսօր երբ անդրադառնում ենք հայ եկեղեցու Պետի գլխավորած միջեկեղեցական հարաբերությունների գործունեությանը, նկատում ենք, որ դա բազմակողմանի է՝ պայմանավորված եկեղեցիների պետերի միջև փոխացելություններով, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմակերպած ժողովներից, հանդիպումներին հայ եկեղեցու մասնակցությամբ, ի նպաստ աշխարհի խաղաղության հայ եկեղեցու գործադրած ջանքերով՝ այլ եկեղեցիների հետ միասին:

Այս նշանակում է, որ ինչպես միշտ, մաս էկումենիզմի զարգացման մեր օրերին ս. Էջմիածնի հեղինակությունը, իբրև քրիստոնեական կենտրոնի, դուրս է գալիս իր ազգային սահմաններից՝ մի անգամ ևս ընդգծելով իր առաքելության համաքրիստոնեական բնույթը:

Այսօր հայ եկեղեցին ծանոթացնել օտարներին միայն իր անցյալով, կնշանակեք սահմանափակել նրա այսօրվա նշանակությունն ու առաքելությունը: Հայ եկեղեցին ինչպես երեկ, այսօր էլ ունի իր դերը և ասելիքը մեր ժողովրդի եկեղեցական, ազգային-հասարակական կյանքում, ինչպես մաս

իր ուրույն տեղը՝ համաքրիստոնեական բույր եկեղեցիների մեծ ընտանիքում:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ մեր կապերը, որ զարգանում և խորանում են էկումենիկ շարժման հեռանկարներով, հնարավորություն են ստեղծում, որ համաշխարհային ճանաչում գտնի մեր եկեղեցու կրոնական, ազգային և մշակութային ժառանգությունը՝ ճշմարիտ ընկալմամբ:

Հայ եկեղեցին միշտ ըմբռնելով էկումենիկ շարժման ոգին և նրա հետապնդած նպատակները, այն է՝ քրիստոնյա բոլոր եկեղեցիների մերձեցումը, համագործակցության միջոցով հանուն ժողովուրդների եղբայրացման, խաղաղության և արդարության հաստատման, իր հնարավորն առնում է, որ առավել զորանան մեր կապերը բոլոր այլ եկեղեցիների և էկումենիկ հաստատությունների հետ: Նույնիսկ եթե այսօր պահվում են եկեղեցիների միջև հիմնական տարբերություններ ծեսի և վարդապետական ըմբռնումների, վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ եկեղեցիները և քրիստոնեական կազմակերպությունները կարող են ընդգրկվել բարեկամական փոխհարաբերությունների մեջ և գործակցել բազմաթիվ ձևերով, սովորելով մեկը մյուսից, հանդուրժողական ոգով նստելով դավանաբանական խոսակցությունների՝ գոյություն ունեցող տարակարծություններին վերջ տալու հույսով և լավատեսությամբ:

Հայ եկեղեցին հավատում է, որ էկումենիկ շարժումը տալիս է հնարավորություններ ազատ և անկեղծ արտահայտվելու, և ահա թե ինչու Մայր Աթոռում լքշորեն նախաձեռնվում է, որ հայ եկեղեցին նպաստակալաց կերպով հանդես գա միջեկեղեցական փոխհարաբերություններում՝ առավել գործոն կերպով իր մասնակցությունը բերելու բարոյական և հոգևոր այն առաքելությանը, որն արտահայտվում է աշխարհում քրիստոնեական ճշմարիտ եկեղեցիների կենդանի վկայությամբ:

ԱՐՄԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ